ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ

«ԷԿՈՆՈՄԻԿՍ ԱՈՒԴԻՏ»
ՍԱՀՄԱՆԱՓԱԿ
ՊԱՏԱՍԽԱՆԱՏՎՈՒԹՅԱՄԲ
ԸՆԿԵՐՈՒԹՅՈՒՆ

ECONOMICS AUDIT

REPUBLIC OF ARMENIA

«ECONOMICS AUDIT»

LIMITID LIABILITY
COMPANY

/ՀԿ խորհրդի 26.01.2021թ-ի Թիվ 28-Ա որոշմամբ ռեգիստրում գրանցման ամսաթիվը՝ 29.01.2021թ, հիմնական գրանցման համարը Թիվ /1210479/
ՀՎՀՀ 01572702
ք. Երևան, Խանջյան 47/8

Անկախ աուդիտորի եզրակացություն

«ՀՈՐԻԶՈՆ-95» ՍՊԸ մասնակիցներին

Աուդիտորի կարծիքը

Մենք աուդիտի ենք ենթարկել «ՀՈՐԻԶՈՆ-95» ՍՊԸ այսուհետ «Ընկերություն» ֆինանսական հաշվետվությունները, որոնք ներառում են 2021թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ ֆինանսական վիճակի մասին հաշվետվությունը, ինչպես նաև այդ ամսաթվին ավարտված տարվա համապարփակ ֆինանսական արդյունքի, սեփական կապիտալում փոփոխությունների և դրամական միջոցների հոսքերի մասին հաշվետվությունները, և ֆինանսական հաշվետվություններին կից ծանոթագրությունները, ներառյալ՝ հաշվապահական հաշվառման նշանակալի քաղաքականության ամփոփ նկարագիրը:

Մեր կարծիքով կից ֆինանսական հաշվետվությունները, բոլոր էական առումներով ճշմարիտ են ներկայացնում 2021թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ Ընկերության ֆինանսական վիճակը, ինչպես նաև նույն ամսաթվին ավարտված տարվա ֆինանսական արդյունքը և դրամական միջոցների հոսքերը՝ Ֆինանսական Հաշվետվությունների Միջազգային Ստանդարտների համաձայն (ՖՀՄՍ-ներ):

Կարծիքի հիմքը

Մենք աուդիտն անցկացրեցինք Աուդիտի միջազգային ստանդարտներին (ԱՄՍ-ներ) համապատասխան: Այս ստանդարտներից բխող մեր պատասխանատվությունը լրացուցիչ նկարագրված է այս եզրակացության «Աուդիտորի պատասխանատվությունը ֆինանսական հաշվետվությունների աուդիտի համար» բաժնում: Մենք անկախ ենք ընկերությունից՝ ֆինանսական հաշվետվությունների աուդիտին վերաբերող էթիկայի պահանջներին համապատասխան համաձայն Հաշվապահների էթիկայի միջազգային ստանդարտների խորհրդի կողմից հրապարակած Պրոֆեսիոնալ հաշվապահների էթիկայի կանոնագրքի (ՀԷՄՍԽ կանոնագիրք) և Հայաստանի հանրապետությունում կիրառելի ֆինանսական հաշվետվությունների աուդիտին վերաբերող էթիկայի պահանջների և պահպանել ենք էթիկայի այլ պահանջները համաձայն այդ կանոնների: Մենք համոզված ենք, որ ձեռք ենք բերել բավարար համապատասխան աուդիտորական ապացույցներ մեր կարծիքն արտահայտելու համար:

Ֆինանսական հաշվետվությունների համար ղեկավարության և կառավարման օղակներում գտնվող անձանց պատասխանատվությունը

Ղեկավարությունը պատասխանատու է ՖՀՄՍ-ների համաձայն ֆինանսական հաշվետվությունների պատրաստման և ճշմարիտ ներկայացման և այնպիսի ներքին հսկողության համար, որն ըստ ղեկավարության, անհրաժեշտ է խարդախության կամ սխալի հետևանքով էական խեղաթյուրումներից զերծ ֆինանսական հաշվետվությունների պատրաստումը ապահովելու համար:

Ֆինանսական հաշվետվությունները պատրաստելիս՝ ղեկավարությունը պատասխանատու է Ընկերության անընդհատ գործելու կարողության գնահատման համար՝ անհրաժեշտության դեպքում բացահայտելով անընդհատությանը վերաբերող հարցերը, ինչպես նաև հաշվապահական հաշվառման անընդհատության հիմունքը կիրառելու համար, եթե ղեկավարությունը չունի ընկերությունը լուծարելու կամ ընկերության գործունեությունը դադարեցնելու մտադրություն, կամ չունի այդպես չվարվելու որևէ իրատեսական այլընտրանք:

Կառավարման օղակներում գտնվող անձինք պատասխանատու են ֆինանսական հաշվետվողականության գործընթացի վերահսկման համար:

Աուդիտորի պատասխանատվությունը ֆինանսական հաշվետվության աուդիտի համար

Մեր նպատակն է ձեռք բերել ողջամիտ հավաստիացում առ այն, որ ֆինանսական հաշվետվությունները բոլոր էական առումներով զերծ են էական խեղաթյուրումներից, անկախ խարդախության կամ սխալի հետևանքով առաջացման հանգամանքից, և ներկայացնել մեր կարծիքը ներառող աուդիտորի եզրակացություն:

Ողջամիտ հավաստիացումը բարձր մակարդակի հավաստիացում է, բայց այն չի երաշխավորում, որ ԱՄՍ-ներին համապատասխան իրականացված աուդիտը միշտ կհայտնաբերի էական խեղաթյուրումը, երբ այն առկա է: Խեղաթյուրումները կարող են առաջանալ սխալի կամ խարդախության արդյունքում, և համարվում են էական , երբ խելամտորեն կարող է ակնկալվել, որ դրանք առանձին կամ միասին վերցրած, կազդեն ֆինանսական հաշվետվություններն օգտագործողների այդ ֆինանսական հաշվետվությունների հիման վրա կայացվող տնտեսական որոշումների վրա:

ԱՄՍ-ների համաձայն իրականացված աուդիտի ողջ ընթացքում կիրառում ենք մասնագիտական դատողություն և պահպանում կասկածամտություն: Ի լրումն մենք նաև
-Հատկորոշում և գնահատում ենք խարդախության կամ սխալի հետևանքով էական խեղաթյուրման ռիսկերը, նախագծում և իրականացնում ենք աուդիտորական ընթացակարգեր այդ ռիսկերին արձագանքելու նպատակով, և ձեռք ենք բերում աուդիտորական ապացույցներ, որոնք բավարար համապատասխան հիմք կհանդիսանան աուդիտորի կարծիք արտահայտելու համար: Խարդախության հետևանքով էական խեղաթյուրման չհայտնաբերելու ռիսկը ավելի բարձր է, քան սխալի հետևանքով էական խեղաթյուրման չհայտնաբերման ռիսկը, քանի որ խարդախությունը կարող է ներառել հանցավոր համաձայնություն, զեղծարարություն, միտումնավոր բացթողումներ, սխալ ներկայացումներ կամ ներքին հսկողության շրջանցում:
-Ձեռք ենք բերում աուդիտին վերաբերող ներքին հսկողության մասին պատկերացում տվյալ հանգամանքներին համապատասխան աուդիտորական ընթացակարգեր

նախագծելու և ոչ թե ընկերության ներքին հսկողության արդյունավետության վերաբերյալ կարծիք արտահայտելու համար:

-Գնահատում ենք կիրառած հաշվապահական հաշվառման սկզբունքների տեղին լինելը, ինչպես նաև ղեկավարության կողմից կատարված հաշվապահական հաշվառման գնահատումների և կից բացահայտումների խելամտությունը:

-Եզրահանգում ենք ղեկավարության կողմից հաշվապահական հաշվառման անընդհատության հիմունքի կիրառման տեղին լինելը, և հիմնվելով ձեռք բերված աուդիտորական ապացույցների վրա գնահատում արդյոք առկա է էական անորոշություն դեպքերի կամ իրավիճակների վերաբերյալ որոնք կարող են նշանակալի կասկած հարուցել կազմակերպության անընդհատ գործելու կարողության վրա: Եթե աուդիտորը եզրահանգում է, որ առկա է էական անորոշություն, ապա պահանջվում է աուդիտորի եզրակացությունում ուշադրություն հրավիրել ֆինանսական հաշվետվությունների համապատասխան բացահայտումներին, իսկ եթե այդ բացահայտումները բավարար չեն, ապա ձևափոխել կարծիքը: Աուդիտորի եզրահանգումները հիմնված են մինչև աուդիտորի եզրակացության ամսաթիվը ձեռք բերված աուդիտորական ապացույցների վրա: Սակայն ապագա դեպքերը կամ իրավիճակները կարող են ստիպել ընկերությանը դադարեցնել անընդհատության հիմունքի կիրառումը

-Երբ ֆինանսական հաշվետվությունները պատրաստվում են ճշմարիտ ներկայացման հիմունքի համաձայն, գնահատում ենք ֆինանսական հաշվետվությունների ներկայացումը, կառուցվածքը և բովանդակությունը ներառյալ բացահայտումները, ինչպես նաև ֆինանսական հաշվետվությունների հիմքում ընկած գործառույթների և դեպքերի ճշմարիտ ներկայացումը

-Ի լրումն այլ հարցերի կառավարման օղակներում գտնվող անձանց հաղորդակցում ենք աուդիտորի առաջադրանքների պլանավորած շրջանակի և ժամկետների, ինչպես նաև աուդիտի ընթացքում հայտնաբերված նշանակալի հարցերի ներառյալ ներքին հսկողության վերաբերող նշանակալի թերությունները:

Տնօրեն
Արմինե Գրիգորյան
<< Էկոնոմիկս աուդիտ>> ՍՊԸ
ք. Երևան, Խանջյան 47/8
2022թ. Հունիսի 06

Աուդիտոր
Վաչե Հովսեփյան

ՖԻՆԱՆՍԱԿԱՆ ՎԻՃԱԿԻ ՄԱՍԻՆ ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆ

Հազար դրամ	Ծանոթ.	2021թ.	2020թ.
Ակտիվներ			
Ոչ ընթացիկ ակտիվներ			
Հիմնական միջոցներ	4	1319195	1318951
Անավարտ ոչ ընթացիկ նյութական ակտիվներ			
Ոչ նյութական ակտիվներ			
Այլ ոչ ընթացիկ ֆինանսական ակտիվներ			
Հետաձգված հարկային ակտիվներ			
Այլ ոչ ընթացիկ ակտիվներ		91462	91462
		1410657	**1410413**
Ընթացիկ ակտիվներ			
Պաշարներ	5	595716	825660
Առևտրային և այլ դեբիտորական պարտքեր	6	1700436	1772738
Ընթացիկ հարկային ակտիվներ շահութահարկի գծով			
Ընթացիկ ֆինանսական ներդրումներ		354839	360723
Մնացորդներ դրամարկղում և բանկերում	7	151563	110248
Այլ ընթացիկ ֆինանսական ակտիվներ			
Այլ ընթացիկ ակտիվներ		11297	11918
		2813851	**3081287**
Ընդամենը ակտիվներ		**4224508**	**4491700**
Բաժնետիրական կապիտալ	8	390140	390140
Կուտակված շահույթ (վնաս)		1611022	1500022
Վերագնահատումից պահուստ			
Պահուստային կապիտալ			
		2001162	**1890162**
Ոչ Ընթացիկ պարտավորություններ			
Վարկեր և փոխառություններ			
Հետաձգված հարկային պարտավորություններ			
Ընթացիկ պարտավորություններ			
Վարկեր և փոխառություններ	9	1428820	1034324
Առևտրային և այլ կրեդիտորական պարտքեր	10	794526	1567214
Ընթացիկ շահութահարկի գծով պարտավորություններ			
Այլ ընթացիկ ֆինանսական պարտավորություններ			
Ընդամենը ընթացիկ պարտավորություններ		**2223346**	**2601538**
Ընդամենը սեփական կապիտալ և պարտավորություններ		**4224508**	**4491700**

Ֆինանսական հաշվետվությունները հաստատվել են՝

Տնօրեն՝ Ա.Խաչատուրյան

Գլխ. Հաշվապահ՝ Կ.Զարգարյան

ՀԱՄԱՊԱՐՓԱԿ ՖԻՆԱՆՍԱԿԱՆ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԻ ՄԱՍԻՆ ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆ

Հազար դրամ	Ծանոթ.	2021թ.	2020թ.
Հասույթ	11	1782628	1536516
Վաճառքի ինքնարժեք	12	(1357848)	(1305324)
Համախառն շահույթ		**424780**	**231192**
Այլ եկամուտներ	13	323	27315
Իրացման ծախսեր	14		
Վարչական ծախսեր	15	(226151)	(143779)
Այլ ծախսեր	16	(1427)	(5160)
Գործառնական գործունեությունից շահույթ		**197525**	**109568**
Ֆինանսական ծախսեր	17	60269	
Շահույթ մինչև հարկերը		**137256**	**109568**
Շահութահարկի գծով ծախս	18	(26256)	(20384)
Տարվա շահույթ		**111000**	**89184**
Այլ համապարփակ ֆինանսական արդյունքներ			-
Ընդամենը տարվա համապարփակ ֆինանսական արդյունքներ		**111000**	**89184**

Ֆինանսական հաշվետվությունները հաստատվել են՝

Տնօրեն՝ Ա. Խաչատուրյան

Գլխ. Հաշվապահ՝ Կ. Զարգարյան

Համապարփակ ֆինանսական արդյունքների մասին հաշվետվությունը պետք է ընթերցվի այս ֆինանսական հաշվետվությունների բաղկացուցիչ մասը կազմող կից ծանոթագրությունների հետմեկտեղ:

ՍԵՓԱԿԱՆ ԿԱՊԻՏԱԼՈՒՄ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՄԱՍԻՆ ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆ

Հազար դրամ	Կանոնադրական կապ.	Պահուստային կապիտալ	Կուտակ. շահույթ	Ընդամենը
2020թ. հունվարի 1-ի դրությամբ	390140		1475838	1865978
Հաշվետու տարվա այլ համապարփակ արդյունք				
Տարվա շահույթ (վնաս)			89184	89184
Թողարկված բաժնետիրական կապիտալ				
Շահաբաժիններ			(65000)	(65000)
Ներքին շարժեր				
2020թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ	390140		1500022	1890162
Հաշվետու տարվա այլ համապարփակ արդյունք				
Տարվա շահույթ (վնաս)			111000	111000
Թողարկված բաժնետիրական կապիտալ				
Շահաբաժիններ				
Ներքին շարժեր				
2021 թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ	390140		1611022	2001162

Ֆինանսական հաշվետվությունները հաստատվել են՝

Տնօրեն՝ Ա. Խաչատուրյան

Գլխ. Հաշվապահ՝ Կ. Զարգարյան

Սեփական կապիտալում փոփոխությունների մասին հաշվետվությունը պետք է ընթերցվի այս ֆինանսական հաշվետվությունների բաղկացուցիչ մասը կազմող կից ծանոթագրությունների հետմեկտեղ:

ԴՐԱՄԱԿԱՆ ՄԻՋՈՑՆԵՐԻ ՄԱՍԻՆ ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆ

Հազար դրամ	2021թ.	2020թ.
Իրացումից մուտքեր	1336105	1159761
Գործառնական այլ գործունեությունից մուտքեր	178	5251
Աշխատանքների կատարման,ծառ. մատուցման գծով	822482	868462
Վճարումներ աշխատակիցներին	413046	505527
Վճարումներ բյուջե	361512	195192
Վճարված տոկոսներ		
Այլ վճարումներ	46021	7029
Ընդամենը գործառնական գործունեությունից դրամական միջոցների զուտ հոսքեր	(306778)	(411198)
Ներդրումային գործունեություն		
Ոչ ընթացիկ նյութական և ոչ նյութական ակտիվների վաճառքներից մուտքեր		
Ներդրումային այլ գործունեությունից դրամական միջոցների մուտքեր		
Շահաբաժինների և տոկոսների ստացումից մուտքեր		14764
Ոչ ընթացիկ նյութական և ոչ նյութական ակտիվների վաճառքներից ելքեր		35328
Ներդրումային այլ գործունեությունից դրամական միջոցների այլ ելքեր		6000
Ընդամենը ներդրումային գործունեությունից դրամական միջոցների զուտ հոսքեր		(26564)
Ֆինանսական գործունեություն		
Ստացված վարկերից և փոխառություններից մուտքեր	714646	994156
Ֆինանսական գործունեությունից այլ մուտքեր		
Ստացված վարկերի և փոխառությունների մարումից ելքեր	300014	411627
Վճարված շահաբաժիններ,տոկոսներ,այլ ելքեր	60269	146256
Ընդամենը Ֆինանասական գործունեությունից զուտ հոսքեր	354363	436273
Ընդամենը դրամական միջոցների զուտ հոսքեր	47585	(1489)
Արտարժույթի փոխարժեքային տարբերություններ	(6270)	388
Դրամարկղում և բանկերում մնացորդներ տարվա սկզբում	110248	111349
Դրամարկղում և բանկերում մնացորդներ տարվա վերջում	**151563**	**110248**

Ֆինանսական հաշվետվությունները հաստատվել են՝

Տնօրեն Ա. Խաչատուրյան

Գլխ. հաշվապահ Կ. Զարգարյան

4 Հիմնական միջոցներ

	Հողամասեր	Շենքեր	Մեքենաներ և սարքավորումներ	Տրանսպորտային միջոցներ	Այլ հիմնական միջոցներ	Շահագործման չհանձնված հիմնական	Ընդամենը
Սկզբնական արժեք							
Վերագնահատումից							
Նվազեցումներ							
Առ 31 դեկտեմբերի 2020թ.	17032	375414	1290217	577263	568115	590069	3418110
Ավելացումներ այդ թվում					244		244
Վերագնահատումից							
Նվազեցումներ			625				625
Առ 31 դեկտեմբերի 2021թ	17032	375414	1289592	577263	568359	590069	3417729
Կուտակված մաշվածություն							
Վերագնահատումից							
Նվազեցումներ							
Առ 31 դեկտեմբերի 2020թ.	0	308555	891792	347365	551447		2099159
Տարվա մաշվածությունը այդ թվում							
Վերագնահատումից							
Նվազեցումներ			625				625
Առ 31 դեկտեմբերի 2021թ.	0	308555	891167	347365	551447		2098534
Զուտ հաշվեկշռային արժեք							
Առ 31 դեկտեմբերի 2020թ.	17032	66859	398425	229898	16668	590069	1318951
Առ 31 դեկտեմբերի 2021թ.	17032	66859	398425	229898	16912	590069	1319195

5. Պաշարներ

Հազար դրամ	2020թ.	2021թ.
Հումք և նյութեր	90957	84623
Կենսաբանական ակտիվներ		
Անավարտ արտադրանք	734703	511093
Պատրաստի արտադրանք		
Ապրանք		
Ընդամենը	**825660**	**595716**

6 Առևտրային և այլ դեբիտորական պարտքեր

Հազար դրամ	2020թ.	2021թ.
Դեբիտորական պարտքեր վաճառքների գծով		
Տրված կանխավճարներ	1265456	1197443
Դեբիտորական պարտքեր բյուջեի գծով		
Դեբիտորական պարտքեր մատուցված ծառայությունների գծով	12093	14221
Դեբիտորական պարտքեր բյուջեյի գծով, այդ թվում		
ԱԱՀ		
Այլ պարտադիր վճար		
Այլ դեբիտորական պարտքեր	495189	488772
Ընդամենը	**1772738**	**1700436**

7 Մնացորդներ դրամարկղում և բանկերում

Հազար դրամ	2020թ.	2021թ.
Դրամարկղ	99187	102258
Բանկային հաշիվներ	11061	49305
Ընդամենը	**110248**	**151563**

8 Առևտրային և այլ կրեդիտորական պարտքեր

Հազար դրամ	2020թ.	2021թ.
Առևտրային կրեդիտորական պարտքեր	1567214	794526
Ստացված կանխավճարներ	1349655	610077
Կրեդիտորական պարտքեր գնումների գծով	112395	133120
Կրեդիտորական պարտքեր ստացված ծառայությունների գծով		
Կրեդիտորական պարտքեր բյուջեյի գծով, այդ թվում	73995	22900
Եկամտային հարկ		
Շահութահարկի գծով		
Հողի հարկի գծով		
Այլ պարտադիր վճար		
Կրեդիտորական պարտքեր աշխատավարձի գծով	29865	28429
Կրեդիտորական պարտքեր պարտադիր սոց.ապ.գծով		
Այլ կրեդիտորական պարտքեր	1304	

9 Հասույթ

Հազար դրամ	2020թ.	2021թ.
Արտադրանքի իրացումից հասույթ		
Ապրանքի իրացումից հասույթ		
Աշխատանքի մատուցումից հասույթ	1536516	1782628
Ընդամենը	**1536516**	**1782628**

10 Վաճառքի ինքնարժեք

Հազար դրամ	2020թ.	2021թ.
Փոխհատուցումներ աշխատակիցներին	422129	346806
Մաշվածության ծախս	8589	
Նյութական ծախսեր	292229	563090
Այլ ծախսեր	582377	447952
Ընդամենը	**1305324**	**1357848**

11 Այլ եկամուտներ

Հազար դրամ	2020թ.	2021թ.
Հիմնական միջոցների օտարումից օգուտ	6417	
Ֆինանսական ներդրումից եկամուտ	14764	
Այլ պաշարների վաճառքից եկամուտներ		
Գործառնական վարձակալությունից	6134	
Կրեդիտորական պարտքերի դուրսգրում		
Այլ եկամուտներ		323
Ընդամենը	27315	323

12 Իրացման ծախսեր

Հազար դրամ	2020թ.	2021թ.
Աշխատակիցների փոխհատուցման ծախսեր		
Պահեստում գտնվող ապրանքների, ապահովագրական, պահպանման և տրանսպորտային ծախսեր		
Հիմնական միջոցների մաշվածության,նորոգման ծախսեր		
Գործուղման, ներկայացուցչական ծախսեր		
Մարկետինգի և գովազդի ծախսեր		
Իրացման այլ ծախսեր		
Ընդամենը		

13 Վարչական ծախսեր

Հազար դրամ	2020թ.	2021թ.
Աշխատակիցների փոխհատուցման ծախսեր	105544	191900
Հիմնական միջոցների մաշվածության,նորոգման ծախսեր	4126	553
Գրասենյակային և կոմունալ ծախսեր		8231
Աուդիտորական և խորհրդատվական ծախսեր		
Գործուղման, ներկայացուցչական ծախսեր	6733	5862
Բանկային ծախսեր		
Փոստի և հեռահաղորդակցության ծախսեր	4364	2765
Չփոխհատուցվող ծախսեր հարկերից և տուրքերից	4103	4042
Վարչական այլ ծախսեր	18909	12798
Ընդամենը	**143779**	**226151**

14 Այլ ծախսեր

Հազար դրամ	2020թ.	2021թ.
Այլ պաշարների վաճառքներից ծախսեր		
Վարձակալության ծախսեր		
Սպասարկման և ներանորոգման գծով ծախսեր		
Ծախսեր տույժերի և տուգանքների գծով		
Արժեքների պակասորդներ և փչացումից կորուստներ		
Փոխարժեքային տարբերությունից վնաս		
Այլ ծախսեր	5160	1427
Ընդամենը	**5160**	**1427**

15 Ֆինանսական ծախսեր

Հազար դրամ	2020թ.	2021թ.
Ստացված վարկերի և փոխառությունների հետ կապված հաշվեգրված տոկոսներ		60269
Ընդամենը		**60269**

16 Շահութահարկի գծով ծախս

Հազար դրամ	2020թ.	2021թ.
Ընթացիկ հարկ	20384	26256
Հետաձգված հարկ		
Հարկային ակտիվ		
Ընդամենը	**20384**	**26256**

17.1 Հաշվապահական հաշվառման քաղաքականություններ

Ֆինանսական ակտիվի, ֆինանսական պարտավորության և բաժնային գործիքի յուրաքանչյուր դասի համար կիրառված հաշվապահական հաշվառման քաղաքականությունը և ընդունված մեթոդների մանրամասները, ինչպես նաև եկամտի և ծախսերի ճանաչման չափանիշներն ու հիմքերը ներկայացված են ծանոթագրություն 3.7-ում:

17.2 Իրական արժեք

Ղեկավարության համոզմամբ՝ ֆինանսական հաշվետվություններում ամորտիզացված արժեքով ճանաչված ֆինանսական ակտիվների և պարտավորությունների հաշվեկշռային արժեքները գրեթե հավասար են դրանց իրական արժեքին:

18 Պայմանականություններ

18.1 Գործարար միջավայր

Հայաստանում իրականացվող քաղաքական և տնտեսական փոփոխությունները շարունակական բնույթ են կրում: Որպես զարգացող շուկա՝ Հայաստանում բացակայում են կատարյալ գործարար միջավայր և համապատասխան ենթակառուցվածքներ, որոնք սովորաբար գոյություն ունեն ազատ շուկայական տնտեսություն ունեցող երկրներում: Բացի դրանից, տնտեսական պայմանները շարունակում են սահմանափակել գործառնությունների ծավալները ֆինանսական շուկաներում, և ֆինանսական գործիքների իրական արժեքները կարող են չհամապատասխանել իրականացված գործարքներին: Հետագա տնտեսական զարգացման հիմնական խոչընդոտը տնտեսական և ինստիտուցիոնալ զարգացման ցածր մակարդակն է՝ զուգակցված տարածաշրջանային անկայունությամբ և կենտրոնացված տնտեսական հենքով, ինչպեսնաև միջազգային տնտեսական ճգնաժամը:

Ընկերության վրա այս գործոնների հնարավոր հետևանքները կարող են ներառել վարկատուների հանդեպ անվճարունակությունը, խաթարված հեղինակությունը,

ապրանքների և ծառայությունների վաճառքի, ինչպես նաև ֆինանսական միջոցների ձեռքբերման հետ կապված դժվարությունները և այլն: Բոլոր այս խնդիրները կարող են հանգեցնել Ընկերության իրացվելիության անկման և, հետևաբար, առաջացնել անընդհատության խնդիրներ: Բացի այդ, համաշխարհային տնտեսության աճի նվազման կանխատեսումներով պայմանավորված Հայաստանի հետ համագործակցող երկրների տնտեսությունների վիճակի վերաբերյալ դեռևս առկա են անորոշություններ, ինչը կարող է հանգեցնել արտերկրից դրամային փոխանցումների կրճատմանը, ինչպես նաև հանքահումքային ապրանքների միջազգային գների անկմանը, ինչից Հայաստանի տնտեսությունը մեծ կախման մեջ է գտնվում: Շուկայական ավելի խիստ ճնշումը կարող է հանգեցնել Հայաստանի տնտեսության, ինչպես նաև Ընկերության վիճակի վատթարացման: Այնուամենայնիվ, քանի դեռ այս անորոշություններում առկա տարակուսանքներն ու ենթադրությունները շատ են, ղեկավարությունը չի կարող վստահաբար հաշվարկել, թե ինչ չափով դրանք կարող են ազդեցություն ունենալ Ընկերության ակտիվների և պարտավորությունների հաշվեկշռային արժեքների վրա:

Ընկերության ֆինանսական հաշվետվությունները չեն ներառում ճշգրտումների ազդեցությունը, եթե այդպիսիք կան, որոնք կարող էին անհրաժեշտ համարվել, եթե ներկա համաշխարհային ճգնաժամի ազդեցությունը Հայաստանում նկատելի և արժանահավատորեն գնահատելի լիներ:

18.2 Ապահովագրություն

Հայաստանում ապահովագրական համակարգը զարգացման փուլում է և ապահովագրության շատ տեսակներ, որոնք լայնորեն տարածված են մյուս երկրներում, Հայաստանում դեռ

չեն կիրառվում: Ընկերությունը չունի ամբողջական ապահովագրական ծածկույթ իրակտիվների և գործունեության ընդհատման համար, չունի նաև Ընկերության գույքի կամ գործառնությունների հետ կապված պատահարների հետևանքով գույքին կամ շրջակա միջավայրինհասցված վնասի գծով երրորդ կողմի նկատմամբպարտավորություններիապահովագրություն: Քանի դեռ Ընկերությունը համապատասխան ձևով ապահովագրված չէ, գոյություն ունի ռիսկ, որ որոշակի ակտիվների կորուստը կամ ոչնչացումը կարող է անբարենպաստ նյութական ազդեցություն ունենալ Ընկերության գործունեության և ֆինանսական վիճակի վրա:

18.3 Հարկեր

Հայաստանի Հանրապետության հարկային համակարգը համեմատաբար նոր է՝ հաճախակի փոփոխվող օրենսդրությամբ, որը հաճախ մեկնաբանություններ է պահանջում: Հաճախ տարբեր հարկային և իրավասու մարմիններ տարբեր մեկնաբանություններ ունեն: Հարկերը հարկային մարմինների կողմից ենթակա են վերանայման և ուսումնասիրության: Հարկային մարմիններն օրենքով լիազորված են տուգանքներ և տույժեր առաջադրել:

Վերոհիշյալ հանգամանքները Հայաստանում կարող են առաջացնել ավելի մեծ հարկային ռիսկեր, քան այլ երկրներում: Ղեկավարությունը համոզված է, որ հարկային պարտավորությունների գծով կատարել է համապատասխան հատկացումներ հարկային օրենսդրության իրենց մեկնաբանության հիման վրա: Այնուամենայնիվ, հարկային մարմինների մեկնաբանությունները կարող են տարբերվել, և դրանց ազդեցությունը կարող է զգալի լինել:

19 Կապակցված կողմեր և գործարքներ նրանց միջև

Ընկերության կապակցված կողմերը ներառում են ընդհանուր վերահսկողության ներքո գտնվող ընկերությունները, հիմնական ղեկավար անձնակազմը և այլ ինչպես նկարագրված է ստորև :

20.1 Վերահսկողության փոխհարաբերություն

Ընկերության մասնակիցներն են հանդիսանում՝ Սամվել Գալստյանը՝ 8.47 % , Գագիկ Գալստյանը՝ 74.33%, Գրիգոր Գալստյանը՝ 17.2%.

20.2 Ղեկավարության հատուցումները

Ընկերության առանցքային կառավարչական անձնակազմը ստացել է հետևյալ հատուցումները, որը ներառված է «Փոխհատուցումներ աշխատակիցներին» հոդվածում.

Հազար դրամ	2020թ.	2021թ.
Աշխատավարձ և պարգևատրումներ	10078	14443

Ֆինանսական հաշվետվությունները հաստատվել են՝

Տնօրեն՝ Ա. Խաչատուրյան

Գլխ. Հաշվապահ՝ Կ. Զարգարյան